## ՊԱՏԿԵՐ Ս· ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Եւ կայր Սա Մարքոյին ձախ դիհն պատ-
կեր մի սքանչելագործ որ հանապազ երթ
եւ եկք որ անցանէին՝ խոնարհեալ երկիր
ծունր կրկնէին եւ զգտակնին ի վեր առ-
նուին: Եւ ասին մեզ, թէ սքանչելագործ 295
է, զի թէ ոք գնայ ծովով կամ ցամաքով, եւ
յամէ, եւ ընտանիքն չի գիտենան՝ մեռա՞ծ է
թէ կենդանի, այն պատկերին առջեւն մոմ վա-
ռեն Սրբուհոյն· եթէ անցնի եւ չիջանի, գի-
տացիր որ մեռած է, եւ թէ չի չիջանի, թէ- 300
պէտ սաստիկ հողմ լինի, կենդանի է· փա՛ռք
Աստուծոյ:

## ՐԱՅԹԱԼ

Եւ կայ մօյտան մի մեծ՝ Բայթալ կոչի,
է ի մէջ քաղքին, ուր ապնիւ եւ մեծագին չու-
խանին ծախվի, սկառլաթ, Կ· չլայ, Հ· չլա, 305
Ճ· չլա, քարզիայ, Փալանտուշ, եւ այլն· եւ
ասին թէ օրն հազար բեռ չուխի կու կապվի:

Եւ կայր այս Ռայթալն զարմանալի կա-
մուրջ յոյժ բարձր, իբրեւ դաշտարակ, իբր
Եալընկզկօղն Մայսարու, այնպէս որ մեծ կէ- 310
մով ելքէնիքովն կ՝անցնին· բայց վերեւն
փայտէ քօրրու կայ, զայն վերցնեն, որ տի-
բաքին ծայրն չի դիպի:

Եւ կայր տասներկու համալ, որ տարին
տասներկու ամիս ամէն ի ժիր միշտ քեսայիւք 315
կարմիր ոսկի սաֆի կու կրեն տառապկա-
նէն: Եւ տեսաք խանութ մի ձկան ակռայ,
երկու մարդապօյ երկայն եւ հաստ: